

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում բավականին ծավալուն անդրադարձ կատարվեց հավաքների ազատության իրավունքին:

Հավաքների ազատության պաշտպանությունը առանցքային նշանակություն ունի ժողովրդավարական պետության համար՝ հանդիսանալով քաղաքացիական հասարակության կայացման, հասարակության անդամի կողմից հանրության շրջանում իր կարծիքն ազատորեն արտահայտելու, հանրային կարծիքի ձևավորման գործընթացին մասնակցելու և ժողովրդաիշխանության իրականացման անհրաժեշտ նախապայման, հասարակության, նրա առանձին շերտերի ու խավերի և իշխանության միջև երկխոսության գործուն միջոց:

Այս իրավունքի կարևորությունը ընդգծվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է, այդպիսի հասարակության հիմնաքարերից մեկը, իսկ իշխանությունները որոշակի հանդուրժողականություն պետք է ցուցաբերեն խաղաղ հավաքների նկատմամբ, և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հավաքների ազատությունը չպետք է զրկվի իր ողջ էությունից<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տես Աշուղյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 17.07. 2008 թվականի վճիռը:

2015 թվականին իրականացված Սահմանադրության փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանվեց, որ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքների և ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Այսպիսով սահմանադրական նորմով հստակ առանձնացվել են հավաքների ազատության սահմանափակման հիմքերն ու նպատակները: Արդյունքում, սահմանադրական այս նորմով և «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածով սահմանված հավաքների ազատության սահմանափակման նպատակների միջև առկա է անհամապատասխանություն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների արդյունքում «սահմանադրական դատարանի անդամ» հասկացությունը վերացվեց, մինչդեռ Օրենքի 8-րդ հոդվածը նախատեսում է հավաքներին մասնակցելու և հավաքներ կազմակերպելու սահմանափակումներ սահմանադրական դատարանի անդամների համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

Գործող օրենքի 8-րդ հոդվածով սահմանված են Սահմանադրական դատարանի անդամների ու դատավորների, ինչպես նաև զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայության ծառայողների հավաքներին մասնակցելու և հավաքներ կազմակերպելու սահմանափակումներ:

Միաժամանակ ոլորտային մի շարք օրենքներ նշված անձանց համար նախատեսում են այլ բնույթի սահմանափակումներ, օրինակ՝ «Դատախազության մասին» (հոդված 43-րդ), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (հոդված 1-ին), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (հոդված 43-րդ), «Ոստիկանությունում ծառայության մասին» (հոդված 39-րդ), «Փրկարար

ծառայության մասին» (հոդված 39-րդ) ՀՀ օրենքները համապատասխան ծառայություն անցնող անձանց արգելում են միայն կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց, իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հոդված 30-րդ) և «Քրեակատարողական ծառայության մասին» (հոդված 32-րդ) ՀՀ օրենքներն արգելում են կազմակերպել ոչ միայն գործադուլներ, այլև հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցել դրանց:

Այսպիսով, հավաքների ազատության կապակցությամբ վերոնշյալ անձանց քաղաքական չեզոքության կամ զսպվածության պահանջ բովանդակող Օրենքի սահմանափակումները հակասության մեջ են մտնում նրանց ծառայությունը կարգավորող ոլորտային առանձին օրենքներով նախատեսված համապատասխան կարգավորումների հետ:

Հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը չի բացառում, որ օրենքով տարբեր խումբ անձանց համար նախատեսվեն հավաքների ազատության սահմանափակման տարբեր ռեժիմներ:

Հատկանշական է, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 2010 թվականի նախագծի վերաբերյալ Վեներտիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի միջանկյալ համատեղ կարծիքի 27-րդ կետի համաձայն՝ նման սահմանափակումներ կարող են սահմանվել այս անձանց համար միայն այն դեպքում, երբ հավաքներին մասնակցությունը նրանց քաղաքական չեզոքությունը կվտանգի<sup>2</sup>:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է Օրենքը սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին:

### **Առաջարկվող կարգավորման բնույթը**

««Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվել են հետևյալ հարցերը՝

- Օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված հավաքների ազատության սահմանափակումների նպատակները համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նշված նպատակներին,

---

<sup>2</sup> [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)049-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)049-e)

- Օրենքի 8-րդ հոդվածում նախատեսված անձանց շրջանակը Նախագծով համապատասխանեցվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անձանց շրջանակին,

- Իրավական որոշակիության սկզբունքի իրացումն ապահովելու, ինչպես նաև այլ օրենքներում տրված կարգավորումների և Օրենքի կարգավորումների միջև հակասությունը բացառելու համար Նախագծով սահմանվել է, որ դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքներ կազմակերպելու և հավաքներին մասնակցելու իրավունքների լրացուցիչ սահմանփակումները կարող են սահմանվել այլ օրենքներով,

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամների վրա դատավորի նկատմամբ տարածվող սահմանափակումը չի տարածվի մինչև 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը, Նախագծով սահմանվել է, որ դատավորի համար նախատեսված սահմանափակումները մինչև 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ:

### **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները**

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

### **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխանող օրենսդրություն, որը հնարավորություն կտա երաշխավորել հավաքների ազատության հիմնական իրավունքի պատշաճ իրացումը: